

Արձանագրություն № 4 (295)
ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի
2016 թ-ի դեկտեմբերի 22-ի նիստի

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը:

Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 28 անդամներից 20-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

Օրակարգ.

- 1. ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակուլտետների/ վարիչ դոցենտ Ս. Լալայանի հաշվետվությունը:**
- 2. Ընթացիկ հարցեր:**

1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակուլտետների/ վարիչ դոցենտ Ս. Լալայանի հաշվետվությունը:

Ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակուլտետների/ վարիչ դոցենտ Ս. Ա. Լալայանը հաշվետվություն ներկայացրեց 2015-2016 ուս. տարվա ամբիոնի գործունեության վերաբերյալ:

Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնի դասախոսների կողմից հրատարակվել է 26 գիտական աշխատանք:

Ամբիոնի դասախոսները հավաքել են անհրաժեշտ կրեդիտները, 3 դասախոս դեռ չեն ավարտել 5-ամյա ծրագիրը, քանի որ ավելի ուշ են միացել դրան: 1 դասախոս չի մասնակցել որակավորման բարձրացման գործընթացին:

Համարյա բոլոր ֆակուլտետները ապահովված են մասնագիտական ուսումնական ձեռնարկներով, ավարտվում է աշխատանքը հոգեբանների համար նախատեսված ձեռնարկի վրա, այն պատրաստ կլինի հաջորդ ուս. տարում:

Այս ուս.տարվա վերջին նախատեսվում է հանձնել ամբիոնի մի խումբ դասախոսների կողմից հեղինակած դասագիրքը: Զուգահեռ աշխատանքներ են տարվում արտալսարանային ընթեցանության ժողովածուի վրա, որի էլեկտրոնային տարբերակը արդեն օգտագործվում է: Նա պարունակում է ադապտացված տեքստեր, առաջադրանքներ, հարցաշար և ստուգողական թեստեր:

Ներ է դրվել ուսումնական աշխատանքի նոր ձև. ունկընդրում, երբ ուսանողները լսում են տեքստը, հետո կատարում համապատասխան առաջադրանքներ: Աշխատանքի այս տեսակը թույլ է տալիս գնահատել, թե անձանոթ տեքստի բովանդակության որ մասը կարող է հասկանալ ուսանողը:

Մեկ ֆակուլտետում /միջազգային հարաբերություններ/ փորձնական եղանակով /համաձայնեցված ուսումնական մասի հետ/ մշակվել է ուսուցման հետևյալ կարգը.

եզրափակիչ քննության 20 բալր բաշխվում են հետևյալ կերպ.

ունկընդրում - 4 բալ /գրավոր/
քերականական աշխատանք - 6 բալ /գրավոր/
մասնագիտական թարգմանություն - 4 բալ /բանավոր/
անձանոթ մասնագիտական տեքստ - 4 բալ /բանավոր/
Մյուս տարի ավելանալու է զրույց առաջարկված թեմայի շուրջ:

Ամբիոնում պարբերաբար անցկացվում են գիտական սեմինարներ, դասալսումներ ամբիոնի վարիչի կողմից:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ ֆակուլտետի դեկան դոցենտ Պ.Բալայանը: Շնորհակալություն հայտնելով հաշվետվության համար, ցանկացավ մյուս անգամ ավելի շատ լսել իրավիճակի վերլուծում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ՝ Ընթացիկ հարցեր:

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՎ՝ Պ. Բալայանը. նա հորդորեց քննական շրջանում լինել ուշադիր, առանց ստուգարքային գրքույկների քննություն չընդունել:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ